

1947

20.  
Pr-14

280  
1104-A4

03 AUG 2009

430m.  
16. 20  
m-14 № 433

ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԵԿԱՆ-ՓԼԻՍԱՓԵՍԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի  
առթիւ.

№ 1

Ի՞նչ է ԿՐՕՆԱ  
եհ

Ի՞նչ է ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1005  
562  
550  
001



Թարգմ. Գալուստ.  
Տպարան «Հայերան».  
1913

Թասախօսուրիւն  
ՊՐՈՖ. Մ. ՌԱԴԻՔԻՆ

24 JUL 2013

1947



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կրօնը և բարոյականութիւնը երկու բոլորովին վերացական գաղափարներ են և մարդկային հոգու ծնունդ, որոնք զարերի ընթացքում, աստիճանական զարգացմամբ հասել են այսօր որոշ ամբողջական ձեռարարման։ Որպէսզի հայ հասարակութիւնը մի որոշ գաղափար կազմի, թէ այս երկու հասկացողութիւնները քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ գտնուող ազգերի մէջ ինչ ձեռվ են ըմբռնւում, և որպէսզի մեղանում տիրող մի կողմից խաւարամիտ, միւս կողմից ծայրահեղ թիւր հասկացողութիւնները փարատուին, հարկ համարեցինք այս գասախօսութիւնը—«Ի՞նչ է կրօնը և ի՞նչ է բարոյականութիւնը»—մանր կրծատումներով և փոփոխութիւններով թարգմանաբար հայ հասարակութեան ներկայացնել»):

Դասախոսութեան հեղինակն է Մարգուրգի համալսարանի պրօֆ. Dr. D. M. Rade, գերմանիայում ծանօթ ազատամիտ հրապարակախոս և քաղաքական գործիչ, որին զերմանացինները իրաւամբ «մեր խիղճը» են անուանում, որովհետև նա եռանդով կուռում է օտարա-

\*) Թարգմանութեան կցում ենք միքանի անհրաժեշտ համարուած ծանօթութիւններ։

կեր քաղաքականութեան դէմ, որ պլիսաւորապէս լեհերի և դանիացիների դէմ է ուղղուած: Վերջին դարում գերման կառավարութիւնը սկսել է հպատակ դանիացիներին խիստ ճնշել. յարգելի պրօֆեսորը իսկոյն ճանապարհորդեց դէպի այն կողմերը, ինդիրն ուսումնասիրեց, կազմակերպեց մի շարք դասախոսութիւններ, կազմեց այսպէս կոչուած մի դանիասէր ընկերութիւն և սկիզբ դրեց նոյն ինդիրին նուիրուած մի թերթի: Նոյն անձնաւորութիւնն էր, որ գերմանիայում բողոքի ձայն բարձրացրեց Բելգիական կառավարութեան Քօնկօյի մէջ գործ դրած բարբարոսութեան դէմ և նրա շնորհիւ է որ Գերմանիայում ևս, Ֆրանսիայից-Անդիայից և Խտալիայից յետոյ հիմնուեց «ՔօնկօՄիութիւնը», անսասունների նման ստրկացրած սկամորթների պաշտպանութեան համար: Վերջապէս չմոռնանք յիշել, Գերմանիայում եղած սակաւաթիւ ջերմ հայասէրների շարքից է նաև հայերի մասին իր հրատարակած բազմաթիւ յօդուածներով մեծ ծառայութիւն է մատուցել մեղ Prof. Rade. Dr. Rohrbach. Pastor Lepsius, Stier և ուրիշ շատեր իրենց անթիւ յօդուածներով ոչ միայն թուլացրին այն սխալ կարծիքը, որով Համիդի բարեկամները հայերին իրեւ ստոր վաճառական ժողովուրդ էին ներկայացնում, այլ և դրամական մեծ օգնութիւն կազմակերպեցին թիւրքահայերի համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնէութիւնն ուաբարոյագիտութիւնը. — Բուդդայականութիւնը. — 1. Կրօնն ու բարոյականութիւնը հնագոյն կապով միացած. — Զգտումներ՝ բարոյականութիւնը կրօնից անջատելու. — 2. Կրօնն ու բարոյականութիւնը պէտք է իրարից բաժանել. — Դպրոցներ առանց կրօնի դասերի. — Կրօնասիրութիւնը առանց բարոյականութեան ոչինչ է. — 3. Բարոյականութիւնն ու կրօնը կեանքի մէջ փաստօրէն բաժան են երեան գալիս. — Գիտութեան կարծիքը այս մասին. — Բարոյականութեան բնորոշումը ըստ Կանտի: — «Դու պարտաւոր եսը» իրեւ ներքին, բնական պարտականութիւն. — ա. Ալգրուիկմը էգօիզմ՝ չէ. — բ. Բնազդը բարոյականութեան հետ կապ չունի. — գ. Բարոյականութիւնը իրեւ սովորութեան և գաստիարակութեան արդինք. — Այս վերջին երեք տեսակէտների սիալ կողմը. — Բարոյական կամքի տէր անհատը. — Ներքին անկախութիւնը իրեւ բարոյականութեան աղբիւր. — Կանտի Kategorischer Imperativ-ը (անպայման հրամայականը). — Բարոյականութեան ենթակայականութիւնը. — Կրօնը իրեւ բարոյականութիւնը լրացնող. — Կրօնի բնորոշումը ըստ Կանտի. — Շլայերմախեր. — Անհատը իրեւ ոչ անկախ, այլ անհունութեան հետ կապ ունեցող և ենթակայ մի մասնիկ. — Կրօնի պարգևած սիովիանը. — 4. Գիտութիւնը սովորեցնում է, թէ կրօնն ու բարոյականութիւնը փոխազարձաբար անկախ են և մի ամբողջութեան երկու մասերն են: Քրիստոնէութիւնը աշխատում է այս երկումն էլ իր մէջ ամփոփել. — Քրիստոսի գործունէութեան մէջ այս երկուսը հաւասարաթէք են. — Կրօնն ու բարոյականութիւնը պէտք է անպայման միացած առաջ գնան:

Թարգմանիչը

էլ ունի իր 10 պատուիրանները—վանական օրէնքնները. ինչպէս յայտնի է, իսկական բուդդայականութիւնը պարզապէս վանականութիւն է, որի աղդեցութիւնը միւս կրօնների վրայ մինչև այսօր էլ երկում է, ինչպէս քրիստոնէութեան, մահմեդականութեան և այլն:

Բուդդայականութեան 10 պատուիրաններն են-ոչ մի կենդանի էակ չսպանել, չգողանալ, ամուսնական կեանք չվարել, սուտ չխօսել, ոգելից խմիչք չգործածել, ճաշից յետոյ ծանր (ծամելու) կերակուրներ չուտել, երգեցողութեան, պարի և ներկայացումների չմասնակցել, ծաղիկներ, իւղեր և անուշանոտ ջրեր չգործածել, բարձր և լայն անկողնի մէջ չքնել, արծաթ և ոսկի իրեր սեփականութիւն չունենալ: Եւ այսպիսի մանրամասնութիւններով տնօրինում է բուդդայական կրօնը իր մոլեռանդ հետևողների կենցաղը:

Մահմեդականութիւնը, զենդական կրօնը, հրէականութիւնը ըստ իրենց էութեան օրէնքների վրայ հիմնուած կրօններ են, ուրիշ խօսքով կանոնների կրօն են:

Շատեր աշխատում են ցոյց տալ, թէ վայրենի ժողովուրդների տարրական կրօնային զգացումների մէջ բարոյականութեան հասկացողութիւնը ամբողջովին պակասում է: Ճիշտ է,

## ՅԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ!

Քրիստոնէութիւնը երբէք չի մոռացել այն սկզբունքը, թէ կրօնն ու բարոյականութիւնը մէկ ամբողջութիւն կազմող միութեան երկու մասերն են: Շատերը դատապարառում են կաթոլիկ եկեղեցին նրա համար, որ նա կրօնին երկրորդական տեղ է տալիս և իր ամբողջ ուշը բարոյական (?) ուղղութեամբ դաստիարակելուն է նուիրում:

Ուրիշ կրօններն էլ բարոյականութիւնը անուշադիր չեն թողնում. վերցնենք օրինակ բուդդայականութիւնը,—«...Ես Բուդդայի մօտ, նրա ուսմունքի և նրա համայնքի մէջ ապաստան կորոնեմ»: այս է այն գլխաւոր վարդապետութիւնը, որը բուդդայականութիւնը ընդունում է. սա կենցաղավարութեան օրէնքն է, ուրիշ խօսքով բարոյականութիւնը, որովհետև բարոյականութիւնը այն օրէնքների հաւաքոյթն է, որը մեր կեանքը, մեր յարաբերութիւնը դէպի ուրիշները սահմանում է: Բուդդայականութիւնն

թէկ նրանց կրօնական ծէսերը և կենցաղավարութիւնը գրեթէ առանց իրար հետ կապ ունենալու են տեղի ունենում, բայց շատ կէտեր կան, երբ այդ երկու կողմերը իրար հետ սերտ կապուած են երևան գալիս։ Օրինակի համար այն հանգամանքը, որ այս «վայրենի» ժողովուրդները օտարականներին և մինչև անգամ թշնամիներին հիւրասիրութեամբ են ընդունում և նըրանց իրրե հիւրերի, ուղղակի իրենց աստուածների պաշտպանութեան տակ են դնում, ցոյց է տալիս, որ այս դէպքում բարոյականութիւնն ու կրօնը միասին են երևան գալիս։

1. Ահա այստեղ մենք հանդիպում ենք հետևեալ իրականութեանը—կայ մէկ նախնական կապ, որը կրօնն ու բարոյականութիւնը միացնում է։

Սակայն այսօր մի ուղղութիւն գոյութիւն ունի, որ աշխատում է այս կապը քանդել, աւելի ճիշտն ասած, մի ուղղութիւն չէ այս, այլ տարբեր ուղղութիւններ, որոնք տարբեր կէտերից են սկսում, բայց նոյն նպատակին են դիմում։ 1876-ին հիմնուեց այսպէս կոչուած «Բարոյաքաղաքակրթութեան Ընկերութիւնը», անունն արտայայտում է, թէ նպատակն ի՞նչ է։ Կան և ուրիշ խմբակցութիւններ, որոնք նմանօրինակ ձգտումներով միացած են. զանազան ժամանակներում ապրող ազատ մը-

տածողները սրանց շարքին են պատկանում՝ մասնաւորապէս այսպէս կոչուած աստուածականները (Deist) \*) և սարսյականները (Moralist), որոնք 18-րդ դարում երեան եկան։ Այս ուղղութեան պատկանողները բարոյականութեան օգտի համար է, որ նրան կրօնից բաժանել են ուզում։ Նրանք գտնում են, որ կրօնները, դաւանութիւնները և հաւատքի զանազան ձևի պատկերացումները մարդկանց բաժանման և թշնամութեան պատճառ են դառնում, մի բան, որը զանազան ժամանակների կրօնական պատերազմները իրենց զարհուրելի հետևանքներով ապացուցանում են. հետևաբար—այսպէս են դատում սրանք—կրօնը թշնամի է միութեան, խաղաղութեան և սիրոյ, որոնք ամբողջ մարդկային սերնդին պէտք է տիրէին. կրօնը թշնամի է մարդասիրութեան և բարոյականութեան, որովհետև բարոյականութիւնն է այն միակ միջոցը, ասում են նրանք (թէկ սա բոլորովին սխալ է, այդ մասին մենք դեռ յետոյ կխօսենք), որը մարդկանց իրար հետ է միացնում։

Ուրիշներ էլ կան, որոնք պատճառաբանում

\*) Deist են կոչում մի կրօնական-փիլսոփայական ուղղութեան հետևողները, որոնք թէկ Աստուծոյ գոյութիւնը ընդունում են, սակայն նրա մասնակցութիւնը աշխարհի մէջ մերժում են։

են, թէ կրօններիկ դարը անդառնալի կերպով  
անցել է, և եթէ կան մարդիկ, որոնք այն բա-  
րոյականութիւնն են ընդունում, որը սերտ  
կերպով ձուլուած է կրօնի հետ, այն  
ժամանակ նոքա այդ երկուսն էլ միան-  
գամից կորցնելու վտանգի մէջ են գտնուում։  
Այս տեսակէտի պաշտպան են մեր երիտա-  
սարդներից շատերը, որոնք հազիւ թէ իրենց  
աշակերտական նստարանը և կրօնի դասերը  
թողած, իւրացրած չինելով քրիստոնէական  
վարդապետութիւնը՝ բարոյականութիւնն էլ իս-  
կոյն նրա հետ միասին ծալում և միկողմն են դը-  
նում։ Այս երեսյթի պատճառն այն է, որ նոր  
սերունդը բարոյականութիւնը կրօնի հետ և նրա  
մէջ է սովորել ճանաչել. ուրեմն լաւ չէր լինի,  
որ նրանք միայն պարզապէս բարոյականութեան  
դասաւանդութիւն ունենային. այն դէպքում,  
ասում են նրանք, երբ կրօնական տարակոյսը  
նրանց պատում է, գոնէ բարոյականութեան  
ուսմունքը նրանց մէջ հաստատ կմնայ։ Այս  
առարկութիւնը ամեն ուշադրութեան արժանի է։

2. Կարճ խօսենք. մենք կանգնած ենք այն  
իրականութեան առաջ, թէ ներկայումս շատ  
լուրջ մարդիկ կան, մինչև անգամ ուղղութիւն-  
ներ և կուսակցութիւններ, որոնք այսպէս են

պահանջում—աւելի լաւ է կրօնն ու բարոյակա-  
նութիւնը իրարից բաժանել։

Շատ լաւ. սակայն արդեօք հնարաւո՞ք է  
այդ բաժանումը. այս մասին երբէք չպէտք է  
վիճել, եթէ միայն նրանք կեանքի մէջ անջա-  
տուած են երեան գալիս. եթէ իրօք այսպէս է,  
այն ժամանակ այս կարծիքը առանց հակածա-  
ռելու պէտք է ընդունել։

Բարոյականութիւն առանց կրօնի՝ կարելի  
դանել, այսինքն կան մարդիկ, որոնք յայտնա-  
պէս հակաեկեղեցական են, կրօնի թշնամի են,  
և սրա հետ միասին սակայն բարձր բարոյակա-  
նութեան տէր անհատներ են. եղել են նշանա-  
ւոր, բնաւորութեան տէր անհատներ, որոնց առաջ  
մենք բարոյականութեան տեսակէտով,  
գլուխ պէտք է խոնարհեցնենք, որոնք սակայն  
կրօնը բացարձակապէս մերժում են, և մենք չենք  
կարող նրանց մէջ կրօնի արտայայտիչ նշան-  
ները գտնել։ Ի՞նչպէս պէտք է բացա-  
դրել այն. արդեօք բարոյականութիւնը ինքն  
իրեն, առանց կրօնի գործակցութեան է նրանց  
սեփական դարձել, թէ՝ նրանք այս երկուսը  
միասին են ընդունել և կրօնը յետոյ մէկդի են  
նետել. այս միևնույն է մեզ համար, որովհետեւ  
այս վերջին դէպքում պէտք է ընդունել, որ  
այդ արդէն զարգացման մի բարձր աստիճան է,

ով նրանք առանց կրօնի էլ բարոյական անձնաւորութիւններ են և մենք էլ դէպի այդ ուղղութիւնը ձգտելու ենք:

Ֆրանսիայում պետութիւնը կրօնի դասաւանդութեան մասին եղած ամեն մի հոգացողութիւն, ամեն մի աշխատանք դադարեցրել է և դպրոցների մէջ պարզապէս բարոյականութեան դասաւութիւն է մտցրել. ով կրօնի դասաւանդութիւն ունենալ է ուզում, պէտք է առանձնապէս եկեղեցուն դիմէ: Այս դրութեան հետևանքով զգալի կերպով բազմանում է այն քաղաքացիների թիւը, որոնք առանց կրօնի դասաւանդութեան են մեծանում: Ամերիկայում էլ կրօնի պարտադիր ուսում չկայ, և շատ վատ կլինէր, եթէ մատաղ սերունդը գէթ զանազան բարոյական ըմբռնողութիւններ էլ չստանար այդպիսի դպրոցներում:

Կարելի է վիճել այն մասին, թէ արդեօք կմն մարդիկ, որոնք առանց ամենափոքր կրօնական յոյզի են, որոնք առհասարակ կրօնական ոչ մի ունակութիւն չունեն: \*) Մի յայտնի մը-

տածող և դիտելու կարող անձնաւորութիւն, ինչպիսին Շլայերմախերն է, ժխտում է այս բանը. չկայ մէկը, որը կրօնական յոյզերից բացարձակապէս զուրկ լինի. այսպիսի դէպէրում կրօնը ծածկւում է հոգու խորին խորհրդաւորութեան մէջ և ոչ ոք կարող է տեղեկանալ, թէ կրօնական զգացմունքը ե՞րբ է արտայայւում:

Կարելի է զոնել և կրօն, որը բարոյականութիւնից զուրկ է. այս դժբախտաբար: Անշուշտ կան տարբեր ձևի վարմունքներ և մտածողութիւններ, ուրիշ խօսքով, ամեն մարդ ունի իր որոշ բարոյական տեսակէտը, միայն թէ այդ կարող է յաճախ իսկապէս ոչ բարոյական լինել այսպէս, կան ակնյայնի կրօնասէր անհատներ, որոնց բարոյական հասկացողութիւնը ոչինչ է և մեզ վրայ անբարոյականութեան տպաւորութիւն է թողնում մինչև անգամ: Կռապաշտական կրօնների մէջ կային, և կան էլ այսօր այնպիսիներ, որոնց համաձայն իրենց էական սկըբունքների անբարոյականութիւն են գործում և տարածում. այս կրօնների հետևողները մասնակցում են բարոյապէս անտարբեր կրօնական ծէսերի, կամ մինչև անգամ կրօնական անդըթութիւնների, ինչպէս փիւնիկեցիները, Ազթէք-

\*) Ինչպէս որ բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը, նրաբարչութիւնը ունակութիւն են պահանջում, որը ամեն մարդ չունի, այնպէս էլ կրօնը, կրօնական զգացմունքը, մարդու հոգեկան ընդունակութիւն են, որոնք զանազան մարդկանց մէջ զանազան չափով են երևան դալիս:

ները \*) և այն, և կամ թէ սեռական սանձարձակ ծիսական անբարոյականութիւնների, ինչպէս հին բաբելացիները:

Քրիստոնեայ եկեղեցիների պատմութիւնն էլ շատ յաճախ հանդէս է բերում կրօնական եռանդը անբարոյականութեան հետ կապուած. բաւական է յիշել պատկերամարտութիւնը, հաւատաքննութիւնը և կախարդների հալածանքը: \*\*)

Եւ որքան մեծ դեր են խաղում բռնակալութիւնն ու ընչասիրութիւնը հոգեորականների և վանականների, կրօնի այս «իսկական» ներկայացուցիչների մէջ: Այստեղ հարցն այն չէ, թէ

\*) Ազթէքները Միքսիկայի բնիկներն են, որոնք եւրոպացիների այսեղ գալուց առաջ էլ քաղաքակրթութեան որոշ աստիճանի հասել էին. նրանցից մնացած աւելակները ապացուցանում են այդ:

\*\*) «Կախարդների գատաստան, կամ հալածանք» է կոչում միջազգարի ինկլիզիցիօնի հետ միաժամանակ երևան եկած այն երկոյթը, որին հազարաւոր անմեղներ, գլխաւորապէս կանայք, զոհ գնացին: Այս ամօթալի արատից զերծ՝ չի մնացել նոյնիսկ բողոքականութիւնը, որը կրօնական խնդիրների մէջ առնասարակ ներողամիտ է եղել: Մի աննշան կասկածով կամ մասնութեամբ ոմբաստանում էին շատ կանանց, որպէս թէ սատանայի հետ կապեր են պահպանում և նրա ձևոքում գործիք զանալով քրիստոնեաներին վկասում են իրենց կախարդական միջոցներով: Ամբաստանուածները կաթոլիկ կերի ձեռքով սոսկալի տանջանքների էին ենթարկում, մինչև որ անպատճառ խոստվանէին, թէ իրենք իրօք սատանայի հետ պայման են կապել, կախարդական ոյժ ունեն. այս խոստովանութեան կորզումից յետոյ խեղճ զոհերը խարոյի վրայ ողջ ողջ այրուելու էին գատապարտում:

սխալը հիմնական համոզմունքի, թէ համոզմունքի և վարմունքի, խօսքի և գործի մէջ եղած տարբերութեան մէջ՝ է եղել, որովհետև այդ մարդիկ, պատկերամատներն ու հաւատաքննիչները, պէտք է հասկանային թէ իրենց և թէ ուրիշների համոզմունքի և վարմունքի մէջ եղած տարբերութիւնը և սրանով նրանք մեր աչքին էլ աւելի դատապարտելի են դառնում:

Այսօր էլ եկեղեցասէր լինելը երբէք բարքերի մաքրութեան և անխարդախութեան նշան չէ. կան համայնքներ, ուր մարդիկ կանոնաւորապէս եկեղեցի են յաճախում և հաղորդութիւնից երբէք ետ չեն մնում, բայց և այնպէս նոյն այդ համայնքներն են, որոնք գողերով, սրիկաններով և արբեցողներով լի են: Կարելի է անհատներ ցոյց տալ, որոնք եկեղեցի չգնալը յանցանք են համարում, բայց և միաժամանակ դրանք են, որ իրենց ընտանիքի համար պատիժ և դրացիների համար տանջանք են: Սխալ դատած կլինենք, եթէ այս մարդկանց բարեպաշտութիւնը միայն կեղծաւորութեամբ բացադրենք. կրօնն ու բարոյականութիւնը միշտ չէ, որ իրար լրացնում են: Մարդիկ են եղել, որոնք ամենայն անկեղծութեամբ հաւատացել են՝ թէ իրենք արդար են և դրախտի արժանի, թէ է բարոյական ծանր յանցանքներ են գործած:

դել. յիշեցէք Միւնստէր քաղաքի բարտիստների (մկրտչականներ) պատմութիւնը \*), կամ նորժամանակների այսպէս կոչուած «դարձի բերող» քարոզիչներին, որոնք շատերի դարձի պերելուց յետոյ, հէնց իրենց հետևողներին՝ իրենց յանցաւոր բարքով գայթակղութեան մէջ են ձգել: Մի խօսքով այս կէտը կեանքի մէջ բաւականաշափ բարդ է. խորհրդածութեան նիւթ դարձրէք հետևեալ կէտը—«մեղքի թողութեան» գաղափարը ինչքան հեշտութեամբ կարող է մակերևոյթային դատողների համար մի տեսակ արտօնագիր դառնալ, վստահ լինելով, թէ նորից ողորմածաբար ներման կարժանանան. ինչքան մարդիկ կան որոնք մեղքի թողութեան գաղափարը, որ մեր կրօնի դարդն է կազմում, այսպէս սխալ են ըմբռնել:

\* ) Ակնարկում է բարտիստների հիմած կարճատե թագաւորութիւնը Միւնստէր քաղաքում, որոնց թագաւորը՝ մի նախկին հացագործ՝ ինքնիրեն ասուուծոյ փոխանորդ և բաղաքի ու բնակիչների անսահման տէր է հոչակում և բազմաթիւ սպանութիւններ է կատարում ու զանազան սուս մարգարէութիւններով իր հետևողների ունեցածը և կինները յափշտակում է: Մաքսիմիլեան կայսը (1564—76) քաղաքն առնելուց և բնակիչներին—բարտիստներին—կոտորելուց յետոյ, թագաւորին երկաթէ վանդակի մէջ փակել է տալիս և քաղաքի աշտարակից կախում. վանդակը և միջի դիակը մօտ 150 տարի այդպէս մնում են կախուած, մինչև որ յետոյ ցած են առնելում: Խնչէս յայտնի է բարտիստները համակատրների (30 տարիկան) մկրտութիւն են ընդունում, որից և մկրտչական են կոչում. սրանց մի մասը երկու մկրտութիւն է ընդունում, որի պատճառով էլ կրկնամկրտչական են կոչում:

3) Բարոյականութիւնն ու կրօնը կեանքի մէջ իսկապէս իրարից անջատ են երեսան գալիս: Այս իրողութիւնը ոչինչ չի ապացուցանում այն հարցի նկատմամբ, թէ այսպէս է լաւ, կամ թէ արդեօք այս չէ ձգտելու արժանի գաղափարական դրութիւնը: Երկու կողմերն էլ—կրօնն ու բարոյականութիւնը—կարող են այս դէպքում վկաս կրել, կամ թերևս միայն մէկ կողմը: Այնպէս որ միայն այն կէտը պէտք է գաղափար և նպատակ դառնայ, որով մարդիկ կրօնը բարոյականութեան մէջ և բարոյականութիւնը կրօնի մէջ պահպանեն և խնամեն:

Ի՞նչ կարծիքի է գիտութիւնը այս մասին: Զէ՞ որ գիտութիւնը նրա համար է, որ մեր ըմբռոնումները պարզպանի:

Եւ գիտութիւնը ի հարկէ բաժանում է կրօնը բարոյականութիւնից. նա սովորեցնում է իրաքանչիւրը իր համար բոլորովին անկախ ըմբռնել, ուրիշ խօսքով նրանց իրարից անկախ վիճելն է յայտարարում, միայն թէ այն պայմանով, որ այդ երկուսը նորից սերտ կերպով իրար հետ հիւսուեն: Այդ երկուսը են եւ կմ՞նան իրեկ իրար լրացնող. և եթէ նրանք իրար կորցնեն, իրար յարդը չհանաչեն այս ժամանակ այդ արդէն իրեր քարոզականութիւննեան յետաղի մութիւն պիտի համարեն: 7/1 1922



Խօսենք նախ բարոյականութեան անկախութեան մասին։

Մի ժամանակ սովորական էր, մինչև իսկ փիլիսոփայութեան մէջ էլ, բարոյականութեան հիմքերը կրօնի մէջ որոնել և նրա ուսմունքներից դուրս բերել։ Կանտը առաջինն եղաւ որ այս մեթոդը ջախջախեց. նրանից յետոյ դիտնականօրէն զարգացած մարդկանց համար այդ հին մեթոդի գործածութիւնը անհնար է դարձել. Կանտի տեսակէտով բարոյականութիւնը ամբողջապէս ինքնանկախ է, ամենաազատ և անկապտելի սեփականութիւնը, որ մարդս ունի. նա բարոյականութեան գաղտնիքը գտաւ այսպէս կոչուած անկախութեան (Autonomie) և ինքնաօրէնատութեան մէջ։ Մարդս բարոյականութիւն ունի արդէն, երբ նա բարոյական օրէնքի ձայնը—«դու պարտաւոր ես»—զգում է իր հոգու մէջ. սակայն, և որ էականն է, ոչ թէ իբրև մի օտարի ձայնը, այլ իբրև իր սեփական եսի ձայնը։ Երբ երեխան իր ծնողներից լսում է, «դու պարտաւոր ես այս ու այն անել» և հնագանդում է ծնողների կամքին, դա դեռ ևս բարոյականութիւն չէ. կամ թէ, եթէ մի երեխայ, թէև բոլորովին մենակ է, սակայն յանցանքի ըոպէին բացակայ ծնողների կամքը յիշելով՝ այնպէս էլ վարւում է, այս էլ դեռևս

երբէք բարոյականութիւն համարել չի կարելի։ Միայն այն ժամանակ, երբ երեխան ինքն իրեն պատուէր կտայ—«դու պարտաւոր ես այս ու այն ունել», այսինքն իր սեփական խղճից առաջնորդուելով՝ «դու պարտաւոր ես»-ի յանդում և ըստ այնմ էլ վարւում. այս է ահա բարոյականութիւնը։

Այս օրէնքը, որը բարոյական անհատ ինքն իրեն տալիս է, իր համար շղթայող է այնպէս, ինչպէս մի բնական օրէնք, նա չի կարող այլ կերպ վարուել, քան ինչ որ պարտաւոր է. և այնուամենայիւ ոչ մի ստիպմունք, ոչ մի արտաքին ճնշում կայ այստեղ. ահա այստեղ է այն մեծ տարբերութիւնը։ Բարոյականութեան սահմանի մէջ անհատը թէ իշխողն է և թէ հըպատակողը միաժամանակ. սրանում է բարոյականութեան առանձնայատուկ արժէքը։ Ո՞րտեղից է այս արժանիքը, այս պարտականութեան զգացմունքը, այս խիղճը, այս բարի կամքը. ո՞րտեղից է այս ընդունակութիւնը, որով մարդիկ իրենց կեանքի և վարքի համար օրէնքներ են սահմանում։

Մենք այսօր առհասարակ շատ հարցեր տուինք. այդ ճանապարհով էլ կարծում ենք, թէ իրերի էութիւնը պարզաբանել կարող ենք։ Սակայն, ափսոնս, կարծես ուղղակի լաւագոյն և

կարևորագոյն իրերի լուծումն է միշտ, որ մեզանից ծածկուած է։ Անհնարին է սկզբնապատճառների գաղանիքը պարզել, հակառակ այն բանին, որ մենք ամեն տեղ էլ պատճառական կապակցութիւն աստիճանական գարգացում ենք տեսնում, գուշակում, ենթադրում։

Ո՞վ ցոյց տուեց մեզ, թէ գիտակցութեան ծագումը անդիտութիւնից է, կեանքի ծագումը՝ անկենդանութիւնից, գոյութեան ծագումը՝ անգոյութիւնից։ Այս բոլորը դեռ չլուծուած հարցեր են, և ով որ ամենից աւելի վստահօրէն է այս հարցերի մասին տեղեկութիւն տալիս կամ ճգնում բացատրել, նրան է, որ ամենից աւելի չպէտք է հաւատ ընծայել։ Այսպէս անլուծելի է և բարոյականութեան ծագումը. և ինչպէս էլ հեշտութեամբ ենթադրութիւններ ու կարծիքներ է, որ ստեղծուում են այս հարցի մասին։

ա. Շատեր կամ, որ ինքնազոհութիւնը (Altruismus), այսինքն, ուրիշների բարիքի համար իր եսը զոհելը՝ եսականութեամբ (Egoismus), այսինքն իր սեփական շահի տեսակէտով են բացադրում. որովհետեւ, ասում են նրանք, եսական անհատը իսկոյն ըմբռնում է, որ իր սեփական շահի համար էլ լաւ է, եթէ ուրիշների վիճակը լաւ լինի, դրա համար էլ նա, եսական

անհատը ուրիշներին լաւութիւն է անում։ Անշուշտ. մինչև մի որոշ աստիճան կարող է այս տեսակէտը ուղիղ համարուել, սակայն երբ իրերը այլ կերպ դասաւորուեն, և երբ անձնական շահը որոշակի պահանջում է ուրիշների իրաւունքը ոտնատակ տալ. որտեղից է ստանում եսականութիւնը այն ոյժը՝ իր ներքին աշխարհի մէջ «դու պարտաւոր ես»-ի ձայնը ուժգնապէս հնչեցնելու, այն ձայնը, որը ազնիւ անհատին ընդունակ և տրամադիր է դարձնում իր նմանի շահը իր շահից գերադասելու, գերադասելու իր գոյութեան միջոցներից, իր կրքերից ու յարմարութիւններից աւելի։

բ. Ուրիշներ էլ կան, որ ասում են, բարոյականութիւնը տնտեսական եւ ընազդական կեանքից է կամաց-կամաց զարգացել, առաջ եկել, մի բան, որ մենք կենդանիների մէջ էլ արդէն տեսնում ենք։ Բնտանիք, ընկերակցութիւն, պետութիւն, այս ամենը գոյութիւն ունեն կենդանիների մէջ էլ. յիշեցէք մը ջիւնների և մեղուների պետութիւնները, որոնք իսկական բարդ պատկերներ են, գրեթէ ճիշտ այնպէս զանազանաւորուած, ինչպէս մարդկային պետութիւնները։ Ինչու չպէտք է ընդունել ուրեմն, թէ բնական, պարզապէս մեքենայական բնագդական կեանքը մեղ մօտ ես, ինչպէս կենդանիների մէջ

տնտեսական ազդակներից է առաջ գալիս։ Սակայն այս բացատրութիւնը գոհացուցիչ լինել չի կարող այն խնդրի համար, որը մեզ ամենից աւելի է զբաղեցնում։ Նա չի պարզաբանում անհատների պայքարը, որը նրանք մղում են իրենց բնագդական կեանքի դէմ, իրենց եսակամութեան դէմ, չի պարզաբանում մարդկանց այն ընդունակութիւնը, որով նրանք, հակառակ իրենց եսի, բնագդի մղումին՝ դատում, տանջւում և վճռում են։ Այդ բացատրութիւնը անգոհացուցիչ է և այն երեսյթի համար, որով անհատը այն ժամանակ միայն իւր իշխանական ամենակարողութեամբ իր բարոյական ինքնաօքէնատութիւնն իրագործում է, երբ նա «դու պարտաւոր եսը» կատարեալ զիտակցութեամբ (ևոչ թէ բնագդի մղումով) իր բնագդական կեանքի պահանջներին է հակառակում։

գ. Երրորդ կարգի դատողներ էլ կան, որոնք ասում են. բարոյական կամքը պարզապէս հետեւանք է պատմովթեան երկարատեւ ընթացքի մէջ ծեռք բերած սովորութեան։ մարդիկ այնքան երկար ժամանակից ի վեր սխալ օրէնքների, ուրիշների տուած կանոնների և օտարների ձնշման տակ հեծել են, կանոններ և օրէնքներ՝ որոնք ուրիշների կամքը ընդհանրութեան վրայ բեռ են դարձրել, այդ պատճառով

էլ ընդհանրութիւնը որոշ աշխարհայեացքով և հիմունքներով գաստիարակուել և հետեւաբար դրանց հետ էլ ամուր կապուած է մնում. թէն արտաքին անհամաձայնութիւններ տեղի կունենան նրանց ներքին աշխարհի մէջ, այնուամենայնիւ, նրանք կարծում են, թէ իրենց կեանքը իղենց սեփական համոզմունքով է առաջնորդում։ Իրականութեան մէջ այսպէս է. — ինչ որ մենք «լաւէ» ասում ենք, այդ դատողութիւնը ձեռք ենք բերել ժառանգաբար և կամ թէ ուրիշներն են այդ մեր մէջ անքնական կերպով զարգացրել. այնպէս որ, եթէ մենք այդ սերունդից սերունդ, աւանդաբար եկած կանխաղատումները մի կողմը նետենք, այն ժամանակ մենք մեզ բարիէն ու չարին այն կողմը կդտնենք, այսինքն մեզ համար զբանք այլ ևս գոյութիւն չեն ունենում, կամ թէ գէթ ոչ այն չափով, ինչպէս որ այժմ։

Այս երրորդ տեսակէտն էլ երբէք չի բացատրում այն, ինչ որ մենք բարոյականութիւն ենք անուանում. բարոյականութեան տէր անհատը իր բարոյական իրաւունքն ու բարոյական ոյժը այն ժամանակն է ուժեղապէս զգում, երբ նա իր ներքին վճռականութեան հիման վրայ ինքն իրեն բարոյականութեամբ և անբարոյականութեամբ լի աշխարհի դէմ դիմագրաւ է

դարձնում—այստեղ կանգ կառնեմ ես, ու չեմ  
կարող այլ կերպ վարուել:

Վերևում յիշուած երեք տեսակի բացա-  
տրութիւններն էլ նկարագրում են գոյութիւն  
ունեցող գրութիւնների արտաքին կապակցու-  
թիւնը, որը ուսումնասիրութեան արժանի կէտ  
է: Սակայն նրանք չեն պարզում խղճի և պարտ-  
քի գիտակցութեան իրողութիւնը, չեն պարզում  
անհատի բարոյական համոզմունքի ազատու-  
թեան և ինքնապատասխանատութեան գաղտ-  
նիքը, որովհետև այս դէպքում բարոյականու-  
թիւնը անհատի, սոսկական անձի համար մի մի  
հայրենիք է: Որ մարդիկ մի կերպ միասին են  
ապրում, իրարու շնորհիւ են առաջ գնում, փո-  
խադարձաբար իրարու կամքն են կատարում,  
այս ամենը գեռ բարոյականութիւն չէ ամե-  
նիքն. այլ այն հանգամանքը, որ առանձին ան-  
հատներ գոյութիւն ունեն, որոնք կամք ունեն,  
մի կամք, որը սեփական է և անձնական, մի  
կամք, որը բարիք գործելու համար գոյութիւն  
ունի, կամք, որը ոչ մի ուրիշ անհատ նրան  
պարզել, կամ նրանից նկել կարող է—ահա թէ  
ի՞նչ է բարոյականութիւն\*):

\* Ծան.—Մենք կարող ենք համայնական կեանքի մէջ ա-  
ռանց բարոյականութեանը բոլորվին պատշաճօրէն ապրել, իրարու  
բարիք անել, իրար վերաբերմամբ զիջող լինել, միասին իրաւունք  
և արդարութիւն գործ գնել. այս բոլորը առանց բարոյականու-  
թեան, բարոյականութիւնը բոլորվին անհատական է, նա երկու  
անհատի համար հաստատուն բան չէ:

Այս հիասքանչ երևոյթի հանդէպ կանտը  
երկիւղածութեամբ լի բացականչում է—պար-  
տականութիւն, դու վեհ ու բարձր երևոյթ. դու  
չես շողոքորթում, դու չես սպառնում, դու մի-  
այն մի օրէնք ես յայտարարում, որը ինքն ի-  
րեն ճամբայ է բանում դէպի ներքին, հոգեկան  
աշխարհը. «Ո՞րն է քեզ արժանի սկզբնաւորու-  
թիւնը և ուր կարող ենք քո ազնիւ ծագման  
արմատները որոնել»: Եթէ կանտն էլ մի ան-  
կախութեան շէնք է կառուցանում, որի մէջ բա-  
րոյականութիւնը կարծես իր սեփական տան մէջն  
է, այսինքն անկախութիւնը բարոյականութեան  
համար նոյնն է, ինչ որ տունը մեզ համար,  
այդ գեռ չի նշանակում թէ կանտը նրա ծագ-  
ման մասին մի որոշում է տալիս պատմական  
կամ բնագիտական իմաստով. սրանով նա որո-  
շում է միայն, թէ ճշմարիտ բարոյականութիւ-  
նը և ճշմարիտ անկախութիւնը իրար հետ միա-  
ցած են սերտ կերպով. նրանք միենայն բանն են:

Ոչ թէ այն է բարոյական, ինչ որ սովո-  
րութիւնն է պահանջում, ոչ էլ այն, ինչ որ  
մարդիկ, ուրիշները ցանկանում են, ոչ էլ այն,  
ինչ որ եկեղեցին է պահանջում, ոչ էլ այն,  
ինչ որ աստուածն է պահանջում, (մի աստուած,  
որ ինձ օտար է, որ իմ ներքին աշխարհի հետ  
կապ չունի), ոչ էլ այն է բարոյական, ինչ որ

սեփական (արտաքին աշխարհից և իմ բնագդական կեանքից կախում ունեցող) հաճոյքն է պահանջում. ոչ և ոչ. միայն և միմիայն այն է բարոյական, ինչ որ ես, ազատ ինքս ինձնից, ցանկանում եմ, թէ ահա այս է լաւ, այս է իմ պարտականութիւնը:

Պարտականութիւն կատարելը պարտականութեան համար միայն, առանց կողմանակի դըրդապատճառների. Այնպէս վարուել, ինչպէս որ խելահաս և խղճամիտ անհատը վարուելու է, եթէ նա մեր տեղը լինի. ոչ միայն մի անհատ, այլ և ամեն մի հրեշտակ, ամեն մի աստուած անգամ այդպէս վարուելու պարտաւոր է:

Իմ բարոյական օրէնքը, որը ես ինձ տալիս եմ պէտք է միաժամանակ և ամեն մի խելահաս անհատի յարմարուի, որովհետև ամեն մի խելահաս անհատ, չնորհիւ իր ունեցած բարոյական համոզման, պարտաւոր է նմանօրինակ դէպքերում միենոյն «դու պարտաւոր ես»-ի համդիպել: Այս է կանտի «բացարձակ հրամայականը» (Kategorischer Imperativ). այսինքն, մի պատուէր, որը ուրիշ կողմանակի պայմաններից կախուած չպէտք է լինի. «Վարովի՛ր այնպէս, որպէսզի քո կամքի հիմունքը ամեն ժամանակ էլ մի ընդհանուր օրէնստութեան իքըն չափ ծառայել կարողանայ»:

Եղան շատեր, որոնք բարոյական օրէնքի այս ձեւակերպումը պարսաւեցին, ասելով թէ այն բովանդակութիւնից զուրկ է. սակայն կեանքն է, որ նրան բովանդակութիւն պէտք է տայ: Ամեն մի ձեւ նիւթի պահանջ է զգում, ոչինչ չկայ իրական առանց նիւթի, և այդ է, որ բարոյական անհատին իբրև պարտականութիւն պէտք է գառնայ, եթէ նա իր արժանապատութեան և պարտականութեան գաղտնիքը ըմբռնել է, հասկացել է իր կոչումը դէպի բարոյական ինքնաօրինատութիւնը և ըստ այնմ էլ գործում է, քայլ առ քայլ, առանց կանգ առնելու ընթանում է, մի գործողութիւնից դէպի միւսն է անցնում վստահօրէն:

Կարող է շատ անգամ շատերին այնպէս թուել, թէ բարոյականութիւնը մի հատ չէ, այսինքն մի ընդհանուր միութիւն չի կազմում, ամեն անհատի, սերունդների և ժողովուրդների համար մի օրինակ չէ: Սովորութիւնների պատմութիւնը ցոյց է տալիս, որ շատ հակաբարոյական հասկացողութիւններ իբրև բարոյական են նկատուել և ընդունուել, և նկատում ու ընդունում են մինչև այսօր էլ: Պէտք էր կարծել թէ, հօրն ու մօրը և կամ ծերերին յարգելը ամեն ժամանակ և ամեն տեղ իբրև բարոյական օրէնք պէտք է որ ընդու-

նուած լինէր. սակայն ժողովութիւներ են եղել, սրանց մէջ պարտականութիւն էր համարում ծերերին ժամանակից առաջ մահացնել (շատ անգամ նաև լափել), մինչև անգամ եթէ դրանք հայր կամ մայր էլ լինէին։ Պէտք էր կարծել, որ հետեւեալ բանը գոնէ բարոյականութիւն համարուէր ամեն տեղ և ամեն ժամանակ — այսինքն, ծնողները պարտաւոր են իրենց որդիներին սիրել, խնամել և մեծացնել. (չէ՞ որ նոյնը կենդանիներն էլ են անում)։ մենք ամենքս գիտենք սակայն, որ ժողովութիւներ<sup>\*</sup> են եղել և կան էլ, որոնք իրենց համար աւելորդ եղած աղջիկներին, կամ թէ թոյլ ու հիւանդու զաւակներին կեանքից զրկում են։

Մենք սակայն պէտք է՝ ըստ մեր պարտականութեան գիտակցութեան վարուենք, այնպէս որ ամեն մի բարոյական խնդրի համար մենք պէտք է ընդունակ լինենք այսպիսի օրէնքներ սահմանել, որոնք բարոյական ամբողջ աշխարհի համար էլ առանց այլեայլութեան ընդունելի լինեն։ Ահա այս է բարոյականութեան

\* Ինչպէս պատմութիւնից էլ յայտնի է, սպարտացիները իրենց նորածիններին զանազան խիստ փորձերի էին ենթարկում, զինով լողացնում, քաղցած պահում և այլն, միայն այս փորձերին դիմացողները ապրելու արժանի էին համարում, միւսները ձըգւում էին Տայքետոն վիճը։

միութիւնը, որով մենք ամեն մի բարոյական անհատի հետ համաձայնել կարող ենք։ Իսկ թէ իրական կեանքի մէջ մենք ի՞նչը կատարելու պարտաւոր ենք և ի՞նչը ոչ, այդ արդէն իւրաքանչիւրի գործն է, դրա համար մենք մեր լիդուն ունենք, որը մեզ համար այն ոյժը պէտք է լինի, որով մենք մեր անձնական շահից անկախ դատելու ընդունակ լինել կարողանանք, առանց ուշք դարձնելու, թէ արդեօք այս կամ այն անհատը մեզ ճիշտ կըմբռնի, կամ թէ արդեօք ուրիշներն էլ այդպէս կվարուէին, ինչպէս մենք ենք վարուել։

Այս էլ ճիշտ է, թէ խիզճերը տարբեր տարբեր են ներգործում։ այս մասին կատակներ անելը որոշ շրջանների մէջ սովորական է, այնուամենայնիւ հէնց այդ է նրա վեհութիւնը։ Շատ ուղիղ է, որ մենք այն դէպքում, երբ ուրիշ ամեն հեղինակութիւն, ուրիշ ամեն երաշխիք և ամեն մի օգնութիւն անարժէք ենք գտնում, այն ժամանակ մեր խղճի գատաստանին ենք դիմում։ Շատ ուղիղ է, որ երբ բարոյականութիւնը կեանքի մէջ գործադրութեան է մանում, կեանքի բարդ մանրամանութիւնների մէջ ներգործել է սկսում, երբ դատավճիռների հակառակութիւնները մեզ պաշարում են, այն ժամանակ էլ հաւասար բարու-

յական արժանիքի տէր անհատները տարբեր կերպ են վարւում: Մի օրինակ բերենք \*). կան շատ աղջիկներ, որոնք իրենց ծնողների մօտ են մնում, նրանց խնամելու համար, թէև նրանց պատճառներ և առիթներ պակասելիս չեն եղել ուսում ստանալու կամ մի կոչում ընտրելու և կեանքի մէջ իրեկ անկախ անհատներ հանդէս գալու: Դէպքեր էլ կան, երբ շատ աղջիկներ հաշտուում են այն մտքի հետ, թէ ծնողները թողնել և կեանքի մէջ մի որևէ պաշտօն ձեռք բերել: Ո՞վ իրաւունք ունի այստեղ դատելու, ուր է այն բարոյական օրէնքը, որը այս անձնական վճիռը, արտաքին ու ներքին կրիւը ճշտի և որոշի: Ուրիշ օրինակ. մենք մեզ հայրենասէր ենք համարում, սիրում ենք մեր ազգն ու հայրենիքը և աշխատում ենք մեր քաղաքական գործնէութեամբ պետութեան և ընդհանուր մարդկութեան ծառայել. սակայն այն ըոպէից սկսած, երբ որ մենք լըրջութեամբ գործի ենք ձեռնարկում, անմիջապէս կուսակցութիւնների ենք բաժանուում, որոնք ոչ

\*.) Այս օրինակը թէև մեր կեանքին չվ յարմարում, բայց գերմանական ընտանեկան կեանքը ծանօթացնելու համար չափը ճատեցինք: Գերմանիայում իգական սեռի թիւը մեծ է քան արականինը, սրա և քաղաքակլթութեան առաջ բերած այլ հետևանքների շնորհիւ Գերմանիայում ամուրի մնացած օրիորդների թիւը մեծ է:

միայն տարբեր նպատակների և միջոցների են հետևում այլ և իրար հիմնապէս խորտակելու են աշխատում:

Կարճ ասենք. բարոյականութիւնը մի որոշ միութիւն է այն ժամանակ, երբ կամքն էլ դէպի բարին ու պարտականութիւնը միենոյն է, մի հատ է, ինչ որ բոլոր բարոյական էակները կապում է: Իսկ թէ այս կամքը ինչպէս է գործնական դառնում, այդ կախուած է այն նիւթից ու դէպքից, ինչ որ կեանքը նրան—կամքին—ներկայացնում է, կամ նայած թէ ինչ ձեռվ է ներկայացնում՝ վճռելու համար: Կեանքի մատուցած այս ծառայութիւնը ներկայանում է բարոյական կամքին երբեմն օգնող պատրաստականութիւն, երբեմն էլ իրեկ թշնամական հակառակութիւն+ և սակայն այս երկու դէպքերում էլ կամքը պահպանում է իր գործելակերպի անկախութիւնը՝ սեփական համոզմունքի միջոցով:

\*

\*\*

Մինչև այստեղ կրօնի մասին դեռ խօսք չենք արել. հիմա դառնանք նրան:

Կանտը իրապէս անջատում է կրօնը բարոյականութեան դրդապատճառներից ամբոջովին և դնում է նրան բոլորովին անկախ դրութեան մէջ: Նա սրանով լրացնում է լուտերի կրօնական վերանորոգչութեան գործը, այն վերանորոգ-

չութեան, որը բարոյական գործունէութեան միշտց, այսպէս ասած, սակարկովթիւնը, կամ առուտուրի ոգին ջնջեց, կամ թէ գէթ ջնջել ուզեց:—Լաւութիւն պէտք է անել, ոչ թէ նրա համար, որ դժոխքից կամ քաւարանից<sup>\*)</sup> ազատ լինենք, կամ թէ արքայութեան արժանանք. մարդա պարտաւոր է բարիք անել լոկ նրա համար, որովհետեւ նա՝ մարդսըստ իր էութեան բարի է: Սրա հետ միասին կանաը ուրիշ դէպքում կրօնը բարոյականութեան հետ միացած է ընդունում և այն այսպէս. երբ գործը այստեղ է համնում, որ մենք «դու պարտաւոր ես»-ի առաջ ենք կանգնած, այն ժամանակ չպէտք է տատանուել, առանց այլևայլութեան մեր պարագը կատարելու ենք, չպէտք մտածենք նրա հետևանքի մասին ուրիշ խորքով սակարկութեան մասին չմտածենք: Բայց չէ որ բարոյական անձնաւորութիւնն այնուամենայնիւ այստեղ հետաքրքրուել կարող է, թէ արդեօք իր կամ ուժիշների բարոյական գործունէութիւնը արդիւնք ունենալու. է, թէ ոչ. պէտք է, որ այս բոլոր

<sup>\*)</sup> Կաթոլիկ եկեղեցու հնարքներից մէկն է այսպէս կոչուած «քաւարան»-ը. իբր թէ նոր մեռնողների հոգին առաջ գնում է քաւարան, և եթէ նա թեթև մեղքեր ունի, ապա իր մերձաւորները կարող են պատարագով կամ այլ նուէրներով նրան փոխանակ դժոխքի՝ արքայութիւն ուղարկել:

թափուած աշխատանքը, լուրջ հոգատարութիւնը և զոհաբերութիւնը զուր անցնեն, պէտք չէ որ դրանք ազդեցութիւն և հետևանք ունենան: Մի պարզ յոռետեսութիւն, նոյնիսկ վհատութիւնը, շատ վատ է ազդում այս դէպքում, կարող է մինչև անգամ անտանելի դառնալ: Ահա այս կէտից այն կողմը կանտը, շատ հասկանալի կերպով, կրօնի պէտքն է զգում, կրօն է պահանջում, այսինքն այն ժամանակ, երբ բարոյականութիւնը սփոփող և յուսադրող գեր չի կատարում, հանդէս է գալիս կրօնը, որը այդ երկուսն էլ իր մէջը պարունակում է:

Կանտը պահանջում է ընդունել, թէ այն պատուիրանները, որոնք բարոյական անհատը իրեն տալիս է, միենոյն ժամանակ պէտք է մի աստուածութեան պատուիրաններ դառնան մեղ համար: Հոչակաւոր փիլիսոփիան այս տեսակէտի ընդունելութեան մէջ է գտնում այն ամոքումը, թէ նոյն այդ աստուածութիւնը հոգալու է և այն մասին, որպէսզի բարոյապէս կատարած գործը աննպատակ չկորչի, այլ ընդհանուրի կեանքի գոյացութեան ու գործունէութեան վախճանական նպատակին որևէ կերպով ծառայի:

Պարաւականութեան կէտ առկէտ կատարուելը դեռ չի ապահովում այն հանգամանքը, թէ պարտաճանաչ գործունէութիւնը անպայման հե-

տեանք պէտք է ունենայ: Բնութիւնը նոյնպէս, որի անդամն է մարդս՝ իբրև բնական արարած, չի երաշխաւորում նրա գործունէութեան լաւ հետևանքը, նա չի երաշխաւորում, թէ այս ամենը զուր պիտի կորչի, թէ ոչ: Միմիայն մի բարոյական աշխարհաստեղծ ոգի, որը բարոյական աշխարհը և բնական-բնազգական աշխարհը իրար համար է ստեղծել, իրար համար է սահմանել, երաշխաւորում է բարոյական գործունէութեան համար մի անհրաժեշտ արդիւնք. նա երաշխաւորում է բարիի յաղթանակը բոլոր խոչընդուների հանդէպ: Աստուծոյ մի պետութիւն պէտք է գոյութիւն ունենայ, որովհետեւ միայն այդպիսի մի բարիի թագաւորութիւն, բարիի մի իշխանապետութիւն մեզ համար գոյութեան վերջին խօսք է լինելու, վերջին բովանդակութիւնը, վերջին նպատակը: Այս բարոյական լաւատեսութիւնը, թէ բարին մեր գոյութեան վերջնական իշխանապետն է, Կանտը անուանում է կրօն: Եւ իրօք, այս լաւատեսութիւնը կրօնի մէջ իր տեղն ու գերն ունի:

Սրանով մէկտեղ, կրօնը, Կանտի տեսակէտով, բարոյականութիւնից անկախ, տարբեր բան չէ, այլ բարոյականութեան մէկ գործօն մասն է, որը բարոյականութեան հետ միասին, իբրև արամաբարոյական անհրաժեշտութիւն, մեզ

է շնորհուած: Աստուծոյ գոյութիւնը սարոյական պահանջ՝ է (Postulat). այս կէտը Կանտի համար մի մեծ, կարևոր բան է. նրա փիլիսոփայական սիստեմի մէջ շատ լուրջ կէտ է: Բայց և այնպէս, սրանով կրօնի արժէքը լիովին գնահատած լինել չի նշանակում,

Կանտի ուսմունքը կրօնի մասին իր ամբողջացումը գտաւ շուտով Շլայերմախերի ուսմունքով. մենք սրան ենք պարտական կրօնի անկախութեան գիտական ճանաչողութիւնը— կրօնի ինքնանկախութիւնը բարոյականութեան հանդէպ:

Զպէտք է այնպէս կարծել, թէ Շլայերմախերը Կանտի փիլիսոփայութեան շնորհիւ ձեռք բերածները չի ընդունում. նա ճանաչում է այդ փիլիսոփայութեան գլխաւոր կէտերը և աւելի առաջ է տանում նրանց. նա կատարում է այն աշխատանքը, որը Կանտը պակաս է թողել: Բարոյական աշխարհը մնում է նրա համար ել իբրև անկախութեան աշխարհ: Բարոյական անհատի «դու պարտաւոր ես»-ը Շլայերմախերի մօտ «ես կամենում եմ»-ի է փոխւում: Բարոյական անհատը գործելով է, որ ինքն իրեն փոփոխութեան է ենթարկում, ազդում իր շրջապատի վրայ և իր շրջապատող աշխարհը իր ներգործութեան տակ է առնում:

Սակայն նոյն այս բարոյական անհատը

միենոյն ժամանակ և կրօն ունեցող մարդ է, և իբրև այդպիսին՝ ինքնիրեն երբէք ազատ չվ զգում, այլ բոլորովին կախում ունեցող և պատասխանատու, նա կախում ունի Տիեզերքից, նա կախում ունի Աստուածութիւնից: Եթէ բարոյական անհատը բարոյապէս զարգանալու և փոխարկուելու յայտնի անսահման ազատութիւնն ունի, , ապա նա միենոյն ժամանակ, շնորհիւ իր կրօնական համոզմունքի, ինքնիրեն անսահման կրաւորականութեան մէջ զրուած է զգում: Ինչպէս որ նա, իբրև բարոյական մարդ, բոլորովին ներգործական դեր ունի իր շքչապատի բնութեան վրայ, այնպէս էլ նա, իբրև կրօնապէս համոզուած մարդ, մանկական կրաւորականութեամբ ենթարկում է իրեն տիեզերական կապակցութեան և տնօրինութեան: Այս նրա, բարոյական և կրօնական համոզմունք ունեցող ինքնաճանաչողութեան մի կողմն է, նրա բաղկացնող մասերից մէկ: Սրանով նա գիտակից դառնում, թէ ես ինքս, մենակ վերցրած ոչինչ եմ, ես մի բան եմ ներկայացնում ամբողջութեան էութեան հետ ունեցած կապով, այս ամբողջութեան կորիզի հետ ունեցած յարաբերութիւնովս, այն Զօրութեան՝ որը տիեզերքը բարձրացնում և կառավարում է:

Այս միենոյն միտքը Յիսուս և ուրիշ մար-

դիկ զըեթէ նոյնութեամբ հետևեալ խօսքերի մէջ են արտայայտում.

Երբ որ դուք ամեն բան կատարած էք լինում, ինչ որ կատարելու պարտաւոր էիք, այն ժամանակ ասացէք—մենք անպիտան ծառաներ ենք, մենք արինք այն, ինչ որ անելու պարտաւոր էինք:

Յիսուս.

Ի՞նչ ունես դու, որը վերկից քեզ պարզեած չը-  
լինի:

Այս հոսանքը (կեանքը), որի մէջ ես լրդում եմ, սերունդէ սերունդ եկած պարզէ է, ամբողջապէս ողոր-  
մածութիւն է.

Գէօթէ.

Կատարուեցաւ նորից այն, ինչ որ աստղերը կա-  
մենում էին—պայման և Օրէնք: Կամքը ինքնին մի  
կամենալ է, և մենք պարտաւոր ենք կամենալ. և  
կամքի առաջ կամայականութիւնը տեղի է տալիս:

Գէօթէ.

Ես չեմ ապրում, այլ ապրում եմ:

Շըէմի.

Քրիստոնէութեան մէջ կրօնական համոզում ունեցող բոլոր հանճարները այսպէս կոչուած նախախնամական (Determinist) են եղել. Պօ-  
ղոսը, Օգոստինոսը, Լուտերը, Շլայերմախերը և  
այլն: Կալվինը նախասահմանութիւնը (Prädes-  
tination) իր հիմնած կալվինական եկեղեցու կենդրոնական դաւանանքը դարձրեց: Կրօնական խորհրդաւորութիւնը (religiöse Mystik) միենոյն ուղղութեան է հետեւ և հետևում նորագոյն ժամանակներում էլ:

Եթէ մեր ժամանակի լրջամիտ մինիստ-ները\*) հենց այսօրուանից կրօնից խորութիւնն ըմբռնէին, անշուշտ աւելի հեշտութեամբ նրա հետ կհաշտուէին քան թէ բարոյականութեան հետ։ Եթէ չեկէլը Շլայերմախերի փիլիսոփայութիւնը ուսումնասիրելու ելնէր, վստահօրէն կարելի է ասել, թէ նա անսպասելի գիւտեր կանէր։

Սակայն անշուշտ վերև յիշած ջերմ քրիստոնեաների բացարձակ կրաւորականութեան գիտակցութիւնը ոչ պանթէիստականն \*\*) է, ոչ էլ մօնիստական, այլ միաստուածական և այս աւելի քան է քան կրաւորականութիւնը, աւելի ճիշտն ասած կրաւորականութեան մի առանձին տեսակ է. սա հոգեկենդրոնացնումն է Աստուծոյ՝ իբրև իրերի կորիզի մէջ՝ սա մեր փըրկութիւնն է ամեն տեսակ հակաղարձութիւններից, որ կեանքը մեզ ներկայացնում է—դիմա-

\*) Մօնիստները չեկէլի փիլիսոփայութեան հետեւզներն են, որոնք աստուած աշխարհ-նիւթի հետ անբաժան միացած են ընդունում և մարդը ափեզերքի ամենակատարեալ էակն են համարում։ Նրանք իրենց կապը բոլորովին չեն կարում եկեղեցուց և պահում են այն տօները, որոնք հեթանոսութիւնից քրիստոնէութեան են անցել։ Մօնիստների թիւը 6000-ի է համարում։

\*\*) Պանթէիստների վարդապետութեան համաձայն աստուած ձեւառում է մարդու, բոյսերի և առարկաների մէջ, նա առանձին դոյլութիւն չունի, նա ամեն ինչի մէջ է, որոնց իր ոյժով աճեցնում է առաջ տանում։

դարձութիւններ և հակառակութիւններ, որոնք մեզ մեր սեփական ամենաներքին մակատազրից օտարացնել, խորթացնել են աշխատում։ միաստուածական համոզմունքով, Աստուած իրեւ տիեզերքի միջուկը՝ ընդունելով է, որ մարդս իրեն իբրև ափեզերքի մի անդամն է հանաչում և իր հանգիստը գտնում։ Ինչքան էլ թշնամի ոյժերը կատաղաբար հակառակելու ելնեն, այսուամենայնիւ նա մասնակից է լինում ամենի վրայ իշխող աստուածային ոյժին. և այս՝ շնորհիւ իր «Աստուծոյ մէջ ծածկուած», «Աստուծով համակուած» կեանքի, որը նա, կրօնական համոզմունքի տէր անհատը, վարում է։ Բաւական է, որ նա մի բոպէ իր ուշը հաւաքի և իր հոգու խորքը խորասուզովի, և ահա Աստուծոյ հետ ունեցած հաղորդակցութիւնը նորից կվերակենդանանայ՝ իր բոլոր անհրաժեշտ հետևանքներով։—

Այս արդէն մի տարբեր մթնոլորտ է, որի մէջ մենք մտնում ենք, տարբեր մթնոլորտ, քան թէ բարոյականութիւնը մեր շուրջը տարածում է։ Այստեղ չկայ պարտականութեան անվերջ մղումը. այստեղ չկայ ինքնիրեն թողնուել, խարիսխել ու առաջնորդուել, այլ այստեղ կայ Մէկը, որը մեզ առաջնորդում, բարձրացնում, պահպանում և օրհնում է, եւ երբ որ բարոյականութիւնը իր անողոք հայեացքն դէպի այն

անհատն է ուղղում, որը ստիպուած է իր յանցանքը ճանաչել, և պատրաստ է յուսահատուել այն չարութիւնից, որը իր մէջ արմատացած է դեռ ևս,—«ցանկութիւն ունեմ թէս, սակայն բարին իրագործելու ոյժ չունեմ»—ահա այս դէպքում կրօնը այնպիսի դեր է կատարում, որը բարոյականութիւնը երբէք կատարել չի կարող, —կրօնը ներում է նրա յանցանքը:

Կրօնը յանցագործին ողորմածաբար ընդունում է. Նրան պարզեցում մաքուր խիղճ, մի բան, որին նա իր յանցանքի հետևանքով բոլորովին անարժան էր դարձել. կրօնը նրան լեցնում է նորոգ կեանքի ոյժով: Ճշմարիտ որ կրօնը բոլորովին այլ բան է, քան բարոյականութիւնը, և մենք սկսում ենք կամաց կամաց ըմբռնել, թէ ինչու բարոյականութեան մոլեռանդ կողմակիցները կրօնին թշնամաբար են վերաբերւում. և բարոյականութեան օգտի համար է, նրա պակասաւոր կողմը պաշտպանելու համար է որ հետևեալ նշանաբանին են հետեւում, — թող կորչի կրօնը:

4) Մենք գիտութեան հարց տուինք, թէ արդեօք նա այս իրողութեան հանդէպ ի՞նչ դիրք է բռնում, եթք որ բարոյականութիւնը և կրօնը կեանքի գործնականութեան մէջ անջատուած դրութեամբ են երեան գալիս: Եւ մենք աեսանք:

որ գիտութիւնն էլ կրօնի եւ քարոյականութեան փոխադարձ անկախութիւնն է քարոզուս: \*)

Այժմ հարց է ծագում, թէ այս տեսակէտը արդեօք գիտութեան ինչպէս և իրական կեանքի վերջին խօսքն է. որովհետև եթէ գիտութիւնը մի վճիռ է տալիս, դրանով երբէք ասել չի ուզում, թէ այդ վճիռը կեանքի մէջ էլ գործադրելի է: Գիտութիւնը տարրալուծում է այն ամենը, ինչ որ իրականութեան մէջ կապուած և զօդուած է, որպէսզի դրանով ճանաչողութիւն—գիտութիւն ձեռք բերի: Գիտութիւնը իսկապէս իրերը որոշելու և տարբերելու արուեստն է, և նա դրանով մարդկային հոգեկան կեանքի և քաղաքակրթութեան մէջ եղած

\*) Ինչպէս որ բարոյականութիւն ասելով ես միայն անհատականութեան բարոյականութիւնն եմ հասկանում, այնպէս էլ կրօն ասելով՝ անհատականութեան կրօնն եմ հասկանում: Ինչպէս որ եռ հչ մի բարոյական հասարակակարգի արժէք չեմ ընձայում, այնպէս էլ ոչ մի կրօնական հասարակակարգի—կրօնական կազմակերպութեան—եկեղեցու, ոչ մի արժէք չեմ տալիս: Վերը յիշած Պետալոցի խօսքը բարոյականութեան մասին ես առանց վերապահութեան անդրադարձում եմ կրօնի վրայ, այսպէս.—«Մենք կարող ենք առանց կրօնի՝ եկեղեցական համայնքի մէջ բոլորովին պատշաճութեամբ իրար հետ ապրել, եկեղեցի յաճախել, քահանայ պահել և ծխական ժողովների մասնակցել, մկրտութիւն, պսակ և թաղում ընդունել, եկեղեցական տուրք վճարել, այս ամենը առանց կրօնի:—Կրօնը ամբողջովին անհատական է, կրօնը երկու տարբեր անհատների համար հաստատուն բան չէ»:

միութիւնը չի կործանում։ Եւ եթէ, ինչպէս որ մենք ցոյց տուինք, կան բարոյականութեան կողմնակիցներ, որոնք բարոյականութեան օգտի տեսակէտից կրօնի մասին լսել անդամ չեն ուզում, կրօնի կողմնակիցների մէջ սակայն, որոնց շարքին մենք էլ ենք պատկանում, չկայ մէկը, որը կրօնը այլ կերպ ցանկանար և ըմբռնէր, քան եթէ բարոյականութեան հետ սերտ կապուած։

Ես ասացի կրօնի կողմնակիցներ, որոնց մենք էլ ենք պատկանում, որովհետեւ քրիստոնէական կրօնն էլ անշուշտ կողմնակից է, որ կրօնն ու բարոյականութիւնը մի միութիւն կազմեն։ Քրիստոնէութիւնը այն վարդապետութիւնն է, որը կրօնն ու բարոյականութիւնը իր մէջ մարմնացնում է։—Քրիստոնէութեան իբրև սկըզբնական աստիճան եղող հրէական կրօնն էլ նոյն միացման գաղափարին կողմնակից է։—«Ես եմ քո տէր Աստուած, դու չպէտք է ուրիշ աստուած պաշտես»... սա անշուշտ կրօնի պատուէր է։ իսկ «դու չպէտք է սպանես, չպէտք է շնաս, չպէտք է գողանաս, դու պարտաւոր ես հայրդ ու մայրդ պատուել»... «անտարակոյս բարոյական պատուէր է։ Այս երկու պատուէրները մենք կարող ենք այսպէս միացնել, —«Մենք պարտաւոր ենք Աստուած սիրել և նրանից վախենալ, որպէսզի մեր մերձաւորի ստացուածքը

չյափշտակենք»։ այս նախաղանութեան մէջ կըրօնն ու բարոյականութիւնը սերտ միացած երեան են գալիս։

Յիսուս գաւանանք չքարոզեց, նա միայն աստուծոյ մասին չխօսեց, նա մեզնից լոկ հաւատք չպահանջեց։ Նա իր նմանին սիրելը՝ Աստուած սիրելուն հաւասար դասեց և իր օրինակով էլ ցոյց տուեց։ Սրանով Յիսուս կրօնն ու բարոյականութիւնը հաւասարեցրեց և միացրեց։ Հին կրօնի մէջ բարոյականութիւնը շատ աղօտ է արտայայտում։ Յիսուս նրան պարզ և որոշ գոյն տուեց։ Պօղոսն էլ, որը քրիստոնէական կրօնին ձև տուողն է և շատերի կողմից իբրև լոկ կրօնի քարոզիչ է համարում, իր թղթերի մէջ շարունակ բարոյականութեան կարևորութիւնն է շեշտում։

Այն կրօնը, որը Յիսուս մեզ բերեց, հակածիսական էր, այսինքն ոչ մի արժէք չէր ընծայում կրօնական ծիսակատարութեան, այլ առաջնութիւնն է տալիս պարզ սիրոյ կատարման։ Նա շբաթ օրը բժշկում էր և սովորեցնում էր շաբաթ օրը բարին և անհրաժեշտը կատարել։ Նա դատապարտում էր, եթէ մէկը տաճարին կամ քահանային մի բան էր ընծայում, ինչին որ իր հայրն ու մայրը կարօտում էին։ Կրօնական բարեպաշտութեան նա վերջին տեղ էր տալիս, դրա

փոխարէն իսկական ջերմեռանդութիւն էր համարում իր նմանին սիրելուց առաջ եկած վարունքը—քաղցածին կերակրելը, ծարաւածին ջուր տալը, տնազուրկներին պատսպարելը, աղքատներին (ոչ թէ մուրացկաններին, ինչպէս կաթոլիկ եկեղեցին է սովորեցնում) հագուստ տալը, հիւանդներին ու բանտարկեաներին այցելելը. ահա սրանք գերադասում էր Յիսուս ձևական օրինակատարութիւնից։ Անսպառ ներողամտութեան և թշնամին սիրելու վարդապետութեան մէջ կատարելագործութեան է համուռմ Յիսուսի բերած կրօնը։ Ահա այսպէս պէտք է հասկանալ Աստծուն ծառայելը, ինչպէս որ նա հասկանում, քարոզում և կատարում էր։

Եւ այս կրօնը միաժամանակ բոլոր հոգով օրինակատարութեան հակառակ էր։ Նա պարզապէս համոզմունքի կրօն էր, և համոզմունքը կարգադրութիւնների չի հպատակում, եթէ մինչև իսկ այդ կարգադրութիւնը Աստծուց լինի, երբ այդ աստւածը մեզնից դուրս է ապրում, մի հեռաւոր և անծանօթ եթերի մէջ։ «Իսկ ես ասում եմ ձեզ—այսպէս էր արտայայտում լերան քարոզների հեղինակ՝ օրինակատարութեան մոլորութեան մէջ ընկած հրէաների մօտ—իսկ ես ասում եմ ձեզ. չպէտք է բարկանալ, չպէտք է

հակառակասէր լինել, այլ չարը՝ բարիով, և ատելութիւնը՝ սիրով յաղթահարել»։ Սրա համար է, որ նա հրէական բարեպաշտներից ամենամոլեռանդների—փարիսեցիների հետ անվերջանալի պայքարի մէջ մտաւ, որով նա արտաքուստ կործանուեցաւ, սակայն գաղափարով, փաստօրէն յաղթանակեց։ Նրա քարոզած աստուածը արտաօրինատութիւն (Heteronomie) չի ուզում, իր սուրբ կամքը հլութեամբ կատարող ստրուկներ չի պահանջում. այլ անկախութիւն, ինքնաօրինատութիւն, իր ոգին ունեցող արարածներ,—«դուք պէտք է կատարեալ լինեք, ինչպէս որ ձեր երկնաւոր հայրը կատարեալ է»։

Արդէն երբ մի անգամ մարդկութեան այսպիսի մի կրօնի իրողութիւնը (Faktum) շնորհուած էր, որը Աստուծուն հաճելի և ընդունելի ծառայութիւնը միայն ազատ, բարոյական համոզմունքի մէջ էր ճանաչում, դրանով կրօնի և բարոյականութեան մէջ տիրող կապը հաստատուած և կնքուած պէտք էր համարել. և ինչ որ Աստուած զօդել է, մարդս չի կարող անջատել. որևէ ձեռվ կատարուած բաժանումը՝ Յիսուսի միջոցով ձեռք բերած բարձրութեան անկումը կնշանակէր։

Թէև բարոյականութեան մասին եղած գիտութիւնը կարող է իւր ուղին դէպի Աստուծոյ

գաղափարը և դէպի կենդանի կրօնը այն ուղղութեան մէջ փնտրել, ինչ որ մենք քիչ վերեկ իբրև կանտի ուղղութիւնը ընորոշեցինք, կամ թէ ուրիշ ուղղութիւնների մէջ էլ որոնել, սակայն կրօնի գիտութեան համար աւելի հեշտ կլինի կրօնի ուղին դէպի բարոյականութիւնը միշտ աւելի վստահ և հաստատ գծել: Այն կեղրոնացումը, որը մենք անպայման կրաւորականութեան զգացմունքի մէջ ըմբռնում ենք՝ կապանքից արձակում է մեր ամբողջ ոյժը և այդ արձակուած ոյժի համար բացարձակապէս միայն մէկ գործելու ասպարէզ է ցոյց տալիս, — դա կեանքի մէջ բարոյական գործունէութեան ասպարէզն է:

Ինչքան սերտ լինի մեր նույիրուելը բարոյականութեան ինքնաօրինատութեան սրբազնան աղքիւրին — աստուածութեան, այնքան աւելի վստահելի կլինի մեր անհատական բարոյական օրինատութիւնը, այնքան աւելի ազատ, ճառատառուն և յաղթանակող կլինի մեր բարոյականութիւնը կեանքի մէջ:

Ես վերջացնում եմ այս դասախոսութիւնը  
այն միևնոյն խօսքերով, որով ես սրանից ճիշտ  
12 տարի առաջ՝ մէկ ուրիշ դասախոսութիւն՝  
նոյն նիւթի մասին՝ վերջացրել եմ:

«Պարզ դարվինականօրէն խօսելով՝ գոյու-

թեան կոռւի համար է մարդս ստեղծուած. այդ  
կոռւին են ենթարկուած և կրօնա-բարոյականու-  
թեան կապը, և այն անհատը, որը այդ կապի  
վրայ իշխող է, աւելի ուժեղ է, աւելի բարձր  
է քան այն, ով որ միայն բարոյականութիւնը  
իբրև դրամագլուխ ունի և նրանով է միայն  
առաջնորդուած կեանքի մէջ»:





ՀՀ Ազգային գրադարան



NL0151134

